



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am),  
[grisha.balasanian@hetq.am](mailto:grisha.balasanian@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

18.02.2021թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն Համբարձում Մաթևոսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. +37493-82-26-80**

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հողված է պատրաստում: Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը մարզի Արևադաշտ համայնքում ունի զգալի քանակությամբ հողատարածքներ, խաղողի այգիներ, որոնց համար 2019-2020թթ. հողի հարկ չի վճարել: Համայնքապետարանից տեղեկացրել են, որ այդ հարցով դիմել են նաև Արմավիրի մարզպետին: *Ինչու ընկերությունը չի վճարել հարկերը, ինչն է պարզել մարզպետարանը և ինչ լուծում է առաջարկվում:*
2. Որքա՞ն հողատարածք է զբաղեցնում «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը Արևադաշտ համայնքում և այդ տարածքի համար որքան է կազմում հողի հարկը:
3. Ընկերությունից պատճառաբանել են, թե տարիներ առաջ հավելվածարներ են կատարել, այդ իսկ պատճառով չեն վճարում: *Երբ են կատարել հավելվածարները, ինչ չափով:*
4. «Տիեռաս դե Արմենիա» ընկերությունը չի վճարում նաև Արևադաշտի վարչական տարածքում գտնվող գործարանի գույքահարկը, թեև ըստ գյուղացիների, այն շահագործվում է, սակայն պատճառաբանում են, որ ավարտուն տեսք չունի: Մարզպետարանը տեղյա՞կ է այս խնդրից և ինչ քայլեր են ձեռնարկվում:
5. Հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ, իրավաբանական անձինք Արմավիրի մարզի ո՞ր համայնքներում ունեն հողի և գույքահարկի պարտքեր և ինչ չափի: Ինչ քայլեր են ձեռնարկվում պարտքերը գանձելու ուղղությամբ: *Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով իրավաբանական անձի անվանումը, հարկատեսակը և դրա գծով ունեցած պարտքի չափը:*

**Կանխավ շնորհակալություն**

Դիմող՝ **Գ. Բալասանյան**